ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտամետ, , artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվական N 1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ավագանու 11.01.2021թ.-ի N 1 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ - Դեմ - Ձեռնպահ -

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒԲ

ՂԱՋԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱՋԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
11 ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ N 1 ՈՐՈՇՄԱՆ

1. Օրակարգի հաստատում

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնքի 2021 թվականի բյուջեն:

3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

4. Հաստատել 2021թվականի Արտամետ համայնքի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

5. Հաստատել Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ավագանու 2021 թվականի նիստերի ժամակացույցը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտամետ, , artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվական N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկելու համար կիրառել 0,5 գործակիցը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ - Դեմ - Ձեռնպահ -

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
11 ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՇՆ ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Տեղական տուրքերի և վճարների համար սահմանել հետևյալ դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նորշենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույտվության համար տեղական տուրքը սահմանվել՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) սույնկետի «ա» ենթակետով չնախատեսած օբյեկտների համար՝

բ/ա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողօբյեկտների համար ՝ 30000 դրամ.

բ/բ) 500-1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողշենքշինություններիհամար՝ 50000 դրամ.

բ/գ)1000-3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողշենքշինություններիհամար՝ 50000դրամ.

բ/դ)3000-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողշենքշինություններիհամար՝ 100000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդանուր մակերես ունեցողօբյեկտների համար՝ 3000 դրամ

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողօբյեկտների համար ՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ << Օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսում կառույցների,վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվել 5000 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ:

2) Օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500դրամ,
գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ:

5.Իրավաբանականան աձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում առևտրի ծառայությունների մասին ՀՀ օրենքով սահմանված

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերումհեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքըօրացույցային տարվա համար սահմանել 200 000 դրամ.
գ) խանութներում կրապակներում «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում » տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30 000 դրամ:
գ/ա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 10000 դրամ:
գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 15000 դրամ:
դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 20000 դրամ:
6. Համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի, զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաներ), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թուլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել ՝
ա) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու համար թույլատվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուքը սահմանվել՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ:
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ:
գ) այլ արտաքին գովազդի համար 1500 դրամ:
7.1 Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված դրույքի 25 % - չափով:

8.Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները (զինանշան, անվանումնայլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման,

ծառայությունների ամառային կրթությունում օգտագործելու թույլտվության համար ընթացիկ տարվա համար սահմանել 100000 դրամ:

9. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ մեկ երեխայի համար գանձվող վճար սահմանել 4000 դրամ

10.Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական դպրոց և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ մեկ երեխայի ծնողական վճար սահմանել 2000 դրամ, նույն ընտանիքից մեկից ավել երեխայի համար 1500 դրամ:

11.Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:

12.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնքի վարչական տարածքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները՝

ա) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահամնել 10000 դրամ:

13.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվողհողերը հատկացնելու, հետվերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար ՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահամանել 10000 դրամ:

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմիցմրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել 5000 դրամ:

15. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար ՝
1. Աղբահանության վճարը սահմանվում է
1) կենցաղային աղբի համար՝
ա. բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 25 դրամ:
բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ առավելագույնը 25 դրամ.
գ. Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով, մեկ քառակուսի մետր մակերեսի համար աղբահանության վճար սահմանել 3.0 << դրամ:
դ. Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով, մեկ քառակուսի մետր մակերեսի համար աղբահանության վճար սահմանել 4.0 << դրամ:
ե. Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայությունների մասով, մեկ քառակուսի մետր մակերեսի համար աղբահանության վճար սահմանել 10 << դրամ:
2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ա. ըստ ծավալի մեկ խորանարդ աղբի համար՝ 3000 դրամ:
բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար ՝ 10000 դրամ:
16. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել 10000 դրամ:
17. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտամետ, artamet.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

11 հունվարի 2021 թվականի N 3-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնքի 2021 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածների:
2. Թույլատրել Արտամետ համայնքի ղեկավարին 2021 թվականի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխում և գործառնական ու տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու համար սահմանել 50% չափաքանակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	Կողմ -	Դեմ -	Ձեռնպահ -
ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ			
ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒԲ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
11 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՍՍԱՐԴԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ

ՈՒՂԵՐՁ

ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 թ. ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և « Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով Ձեր քննարկմանն է ներկայացվում Արտամետ համայնքի 2021 թվականի բյուջեն:

Արտամետ համայնքի 2021 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի հնգամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

1. Եկամուտները *(հազար դրամներով)*

N	Եկամուտները	
1	Դոտացիա	3500.0
2	Ծառայությունների մատուցումից	
3	Սեփական եկամուտներ	15720.0
	որից՝	
3.1	հողի հարկ	14800.0
3.2	գույքահարկ	410.0
3.3	տեղական տուրքեր	-
3.4	հողի վարձավճարներ	341.0
3.5	այլ եկամուտներ	169.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	*19220.0*

2. Ծախսերը գործառնական դասակարգմամբ *(հազար դրամներով)*

N	Ծախսերը	
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	16645.0
2	Տնտեսական հարաբերություններ	696.0
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն	556.0
4	Կոմունալ ծառայություն	-
5	Առողջապահություն	-
6	Հանգիստ, մշակույթ և կրոն	-
7	Կրթություն	-
8	Սոցիալական պաշտպանություն	500.0
9	Պահուստային ֆոնդ	823.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	*19220.0*

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
11 ԹՎԱԿԱՆԻ 1 ՕՐՎԱ ԿՏՐՈՒԱԾ

1. Արտամետ համայնքի ծախսերը ըստ գործառնական դասակարգման

N		2019թ.	2020թ	2021թ
1	Տեղական ինքնակառավարում Ընդ. բն. հանր. ծառայություններ	13628.6	11602.0	16645.0
2	Կրթություն և գիտություն	–	-	-
3	Սոցիալական ապահովություն	100.0	700.0	500.0
4	Մշակույթ և սպորտ	230.0	-	-
5	Բնակարանային կոմունալ տնտեսություն	1339.3	650.0	-
6	Տնտեսական հարաբերություններ	26187.2	11660.0	696.0
7	Հիմնական խմբին չդասվող ծախսեր	17.6	0.2	823.0
8	Շարժական գույքի իրացումից մուտքեր	-25000.0	-25000.0	-34000.0
9	Շրջակա միջավայրի պաշտպանություն	923.0	1112.0	556.0
10	Առողջապահություն	–	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	*17630.7*	*15230.2*	*19220.0*

2. Արտամետ համայնքի ծախսերի համեմատականը ըստ տնտեսագիտական դասակարգման՝

N		2019թ.	2020թ.	2021թ.
1	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված վճարումներ	11781.7	103990.0	14012.0
2	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	-10000.0	-10000.0	-26000.0
3	Շարժական գույքի իրացումից մուտքեր	-15000.0	-15000.0	8000.0
4	Ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսեր	3884.9	352.0	2209.0
5	Կապիտալ ծախսեր	26334.3	25000.0	34000.0
6	Դրամաշնորհ	-	-	-
7	Սուբսիդիա	-	-	-
8	Սոցիալական ապահովություն	100.0	700.0	500.0
9	Այլ ծախսեր	529.8	611.2	2499.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	*17630.7*	*15230.2*	*19220.0*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտամետ, , artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվական N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել 2021թվականի Արտամետ համայնքի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ	Կողմ -	Դեմ -	Ձեռնպահ -
ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ			
ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒԲ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎԱՄԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ
ԹԻՎ N 4 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Ախատողների քանակը –

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Պաշտոնը	Մուտքային միավորը	Դրույքաչափը
1	Համայնքի ղեկավար	1(մեկ)	221.3

Աշխատակազմ

2	Քարտուղար	1(մեկ)	180.9
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1(մեկ)	138.0
4	Առաջատար մասնագետ	1(մեկ)	166.9
5	Առաջին կարգի մասնագետ	1(մեկ)	137.8
6	Հողաշինարար	1(մեկ)	138.0

Տեխնիկական սպասարկում իրականացնող

7	Հավաքարար	1(մեկ)	92.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտամետ, , artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021 թվական N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. *Հաստատել Արտամետ համայնքի 2021 թվականի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ - Դեմ - Ձեռնպահ -

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Արտաքին հատակագծի 2021 թվականի հունվարի 11-ի

թիվ 01 արձանագրության N 5 որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Ավազանու նիստեր	Ամիս	Ամսաթիվ
1.	Թիվ 1 նիստ	հունվարի	11
2.	Թիվ 2 նիստ	մարտի	11
3.	Թիվ 3 նիստ	մայիսի	11
4.	Թիվ 4 նիստ	հուլիսի	12
5.	Թիվ 5 նիստ	սեպտեմբերի	10
6.	Թիվ 6 նիստ	նոյեմբերի	11